ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏԵՓԱՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ ՔՅՈՒՐՔՉՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 15-րդ փողոցն անվանակոչել ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի և քանդակագործ Ռուզան Քյուրքչյանի անվամբ՝ «Ստեփան և Ռուզան Քյուրքչյաններ փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏԵՓԱՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ ՔՅՈՒՐՔՉՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանը ծնվել է 1929թ. հունվարի 7-ին, ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում: Եղել է քանդակագործ Ռուզան Քյուրքչյանի ամուսինը: 1954թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը, որտեղ դասավանդել է մինչև 1969թ.: 1958թ.-ից աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում, որտեղ 1968թ.-ից եղել է ճարտարապետական արվեստանոցի ղեկավար: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են ՀՀ ԳԱԱ Ագրոքիմիայի ինստիտուտը (1963թ.), Կամերային երաժշտության տունը (1977թ.), Երևանի մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանը (1981թ.), «Ալգորիթմ» ԳՀ կենտրոնը (1985թ.), Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին (2001թ., ՀՀ Պետական մրցանակ՝ 2001թ.), Դիլիջանում՝ Երևաննախագիծ ինստիտուտի հանգստյան տունը (1963թ.): Հեղինակ է նաև մի շարք հուշարձանների՝ Վարդան Մամիկոնյանի հուշարձան (Երևան, 1975թ.), Ռաֆֆու (1988թ.), Ծովակալ Իսակովի (1988թ.), Հովհաննես Այվազովսկու հուշարձան (Երևան, 2003թ.), Վիկտոր Համբարձումյանի (1988թ., Վարդենիս), 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում զոհված մարտիկների (Արճիս, Երևան, Ավան) հուշարձանների ճարտարապետական մասի, Թորոս Թորամանյանի երկու հուշատախտակների՝ Երևանում և Լենինականում, Վահան Տերյանի, Լեոյի, Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Արամ Խաչատրյանի, Հրաչյա Ղափլանյանի տապանաքարերի (1970-80-ական թվականներ, Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն), ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանի, Մխիթար Հերացու, Անանիա Շիրակացու մեդալների (երեքն էլ՝ 1993թ.), Պատվո շքանշանի (2000թ.): 1995թ. դարձել է «Տարվա լավագույն նախագիծ» միջազգային ստուգատեսի Մեծ մրցանակակիր: 1993թ. ճարտարապետության և գրաֆիկական աշխատանքների անհատական ցուցահանդես է ունեցել Երևանում: 1976թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր ճարտարապետի կոչման:

Ստեփան Քյուրքչյանը մահացել է 2004թ. հուլիսի 1-ին, Երևանում:

Հայ քանդակագործ Ռուզան Քյուրքչյանը ծնվել է 1930թ. մարտի 11-ին, Կրասնոդարում (Ռուսաստանիի Դաշնություն): 1955 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Սկզբնական շրջանում աշխատել է հաստոցային քանդակագործության բնագավառում: 1960-ականներից Ռուզան Քյուրքչյանի գործերում ի հայտ են եկել քանդակագործության և ճարտարապետության տարրերի համադրումներ: Ստեղծագործություններից են՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնի գլխավոր հուշապատը, (1965թ., տուֆ), «Արևելք», «Հասմիկ», «Գևորգ Բաշինջաղյան», «Կոմունար», «20 թիվ», «Կարբիդագործը», «Առատություն», «Դաշինք», «Ընտանիք» (1968թ., բրոնզ), «Գարուն» (1968թ., բրոնզ), «Վերածնունդ»

(1972թ., բրոնզ), «Վարպետ Օհանը» դիմաքանդակը (1972թ., բրոնզ), «Կոմիտաս» դիմաքանդակը, «1988» կոմպոզիցիան (1988թ., բրոնզ) և այլն:

Նա ԽՍՀՄ նկարիչների միության անդամ էր:

Ռուզան Քյուրքչյանը մահացել է 2002 թ. դեկտեմբերի 6-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 15-րդ փողոցն անվանակոչել ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի և քանդակագործ Ռուզան Քյուրքչյանի անվամբ՝ «Ստեփան և Ռուզան Քյուրքչյաններ փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏԵՓԱՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ ՔՅՈՒՐՔՉՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ստեփան և Ռուզան Քյուրքչյանների անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏԵՓԱՆ ԵՎ ՌՈՒԶԱՆ ՔՅՈՒՐՔՉՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ստեփան և Ռուզան Քյուրքչյանների անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ